ԿԱՐԾԻՔ

Ռաֆիկ Արամի Խաչատրյանի «Թուրք-հունական հարաբերությունները «դաշնակցային կոնֆլիկտների» համապատկերում (1950-1990-ական թթ.)» թեկնածուական ատենախոսության մասին

Որպես ՆԱՏՕ-ի անդամ պետություններ Հունաստանը և Թուրքիան դաշնակից պետություններ են, սակայն, չնայած այդ հանգամանքին, նրանց միջև առկա են լրջագույն չլուծված խնդիրներ, որոնք ժամանակ առ ժամանակ այն աստիճան են սրում երկկողմ հարաբերությունները, որ այդ երկրները հայտնվում են միմյանց պատերազմ հայտարարելու շեմին: Երկու պետությունների միջև առկա չլուծված խնդիրներից առանձնանում են Կիպրոսի խնդիրը և էգեյան ծովի կղզիների ու «գորշ գոտիների» հիմնահարցը, որոնք տասնամյակներ շարունակ լարված են պահում ոչ միայն երկկողմ հարաբերությունները, այլև ամբողջ Միջերկրածովյան տարածաշրջանը:

Հունաստանի և Կիպրոսի հանրապետությունների փոխհարաբերությունների, ինչպես նաև Կիպրական հարցում Հունաստանի կողմից ճգնաժամի սկզբնական շրջանում վարած էնոզիսի քաղաքականության ուսումնասիրությունը ակամայից ստիպում է զուգահեռներ անցկացնել հայկական երկու պետությունների՝ Հայաստանի ու Արցախի հանրապետությունների փոխհարևաբերությունների, ինչպես նաև Արցախյան հիմնահարցում Հայաստանի վարած քաղաքականության հետ, ինչի արդյունքում ի հայտ են գալիս ինչպես որոշ ընդհանրություններ, այնպես էլ ակնհայտ տարբերություններ:

1974 թ. թուրքական զորքերի կողմից Կիպրոսի հյուսիս-արևելյան հատվածի օկուպացիան, ինչպես նաև կզոու բռնազավթված տարածքները թուրքերով բնակեցնելու Թուրքիայի քաղաքականությունը ոչ միայն չլուծեց հիմնահարցը, այլ ավելի խորացրեց այն: Հույն-թուրքական հարաբերություններում պակաս սրություն չեն հարուցում էգեյան ծովի կղզիների ու «գորշ գոտիների» պատկանելության, ինչպես նաև տարածքային ջրերի սահմանազատման խնդիրները: Թուրքիան պարբերաբար հավակնություններ է ցուցաբերում էգեյան ծովի այն կղզիներ նկատմամբ, որոնց

պատկանելությունը Հունաստանին ամրագրված է երկկողմ ու բազմակողմ միջազգային պայմանագրերով:

Թեև հույն - թուրքական հարաբերություններում այս խնդիրներն առավել ցայտուն ձևով արտահայտվեցին 1950-1960-ական թվականներին ու դրանց շուրջ երկու կողմերի պայքարը շարունակվեց մինչև 1990-ական թվականները, սակայն դրանց չհաղթահարումը հանգեցրել է նրան, որ ինչպես Կիպրոսի, այնպես էլ Էգեյան ծովի կղզիների խնդիրներն այսօր էլ շարունակում են մնալ թուրք-հունական դիմակայության հիմքում: Այս տեսակետից Ռաֆիկ Խաչատրյանի ատենախոսության թեման առավել քան արդիական է:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Առաջին գլխում՝ «Կիպրոսի խնդրի առաջացումը. Պատմական նախադրյալները և տարածաշրջանային զարգացումները», ատենախոսը ներկայացրել է Կիպրոսում հունական և թուրքական համայնքների ձևավորմանը, ինչպես նաև դրանց զարգացման առանձնահատկություններին, ինչպես նաև բրիտանական տիրապետության տակ անցնելուց հետո տեղի ունեցած փոփոխություններին: Տվյալ գլխում անդրադարձ է կատարվում նաև Կիպրոսի խնդրում Հունաստանի և Թուրքիայի ներգրավվմանը և հակամարտության միջազգայնացմանը:

Երկրորդ գլուխը՝ «Կիպրական խնդրի ծավալումը և դրա ազդեցությունը Թուրքիա-Հունաստան հարաբերությունների վրա 1960-1983 թթ.» նվիրված է 1963-1964 թթ. կղզու միջհամայնքային բախումների սրացման հետևանքով կիպրական ճգնաժամի խորացմանը: Ներկայացվում են ինչպես Հունաստանի ու Թուրքիայի, այնպես էլ համաշխարհային տարբեր խաղացողների և միջազգային կառույցների դերակատարումն ու հետապնդած նպատակները տվյալ հակամարտության մեջ :

Առանձին ենթագլուխներ են նվիրված ինչպես 1974 թ. Կիպրոս թուրքական ներխուժմանն ու դրա նախադրյալներին, այնպես էլ կղզու հյուսիս-արևելյան հատվածի բռնազավթումից հետո Թուրքիայի պետական քաղաքականությունը Կիպրոսում:

Երրորդ գլխում՝ «Էգեյան հիմնահարցի առաջացումը և դրա դերը Թուրքիա-Հունաստան հարաբերություններում» ներկայացվում են հույն-թուրքական հարաբերություններում սրությամբ երկրորդ՝ էգեյան հիմնահարցի առաջացման նախադրյալները և նախապատմությունը, քննարկվում են այդ հիմնահարցի բաղադրիչները՝ կապված Հունաստանի և Թուրքիայի տարածքային ջրերի սահմանման, մայրցամաքային շելֆի սահմանների որոշման, էգեյան ծովի կղզիների ապառազմականացման հարցերի հետ: Առանցին ենթագլխով անդրադարձ է կատարվում էգեյան հիմնահարցի ազդեցությանը Հունաստանի և Թուրքիայի միջպետական հարաբերությունների վրա, երբ 1987 թ. և 1996 թ. երկու երկրները հայտնվել էին պատերազմի եզրին:

Չորրորդ գլխում՝ «Թուրք-հունական խնդիրները դաշնակցային և ինտեգրացիոն գործընթացների համապատկերում» ներկայացվում են 1950-1990-կան թթ., հույն-թուրքական հարաբերությունները «ատլանտիստական համերաշխության» սկզբունքի շրջանակներում կարգավորելու ՆԱՏՕ-ի երկրների և առաջին հերթին ԱՄՆ-ի ջանքերը: Առանձին ենթագլխով անդրադարձ է կատարվում Թուրքիայի եվրոինտեգրման գործընթացի վրա Կիպրական խնդրի և էգեյան հիմնահարցի ազդեցությանը:

Եզրակացություններում ամփոփվել են աշխատանքի հիմնական արդյունքները:

Օգտագործելով թեմային վերաբերող աղբյուրներն ու տարբեր հետազոտողների ուսումնասիրությունները, ատենախոսը ստեղծել է կուռ և համապարփակ աշխատություն: Ռ. Խաչատրյանի կողմից կատարվել է ինքնուրույն աշխատանք, և նրան հաջողվել է հաղթահարել թեկնածուական ատենախոսության շրջանակներում իր առջև դրված խնդիրները:

Այդուհանդերձ, աշխատանքը զերծ չէ բացթողումներից ու թերություններից, ինչի վրա հրավիրում ենք ատենախոսի ուշադրությունը:

1. Թեմայի արդիականությունն ավելի հիմնավոր ներկայացնելու տեսակետից ցանկալի էր, որ ատենախոսը զուգահեռներ անցկացներ Թուրքիայի կողմից Կիպրոսի նկատմամբ վարվող ագրեսիվ քաղաքականության և Ադրբեջանի ու վերջին շրջանում նաև Թուրքիայի կողմից Արցախի նկատմամբ իրականացվող նվաճողական

գործողությունների միջև՝ հաշվի առնելով 2020 թ. աշնանը Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված 44-օրյա պատերազմում Թուրքիայի անմիջական ներգրավվածությունը:

2. Ատենախոսության ներածության մեջ անհասկանալիորեն հիմնավորված չեն թեմայի ժամանակագրական սահմանները, նշված չեն հետազոտության օբյեկտն ու առարկան, բացակայում են ատենախոսության գիտական նորույթը, կիրառական նշանակությունը և աշխատանքի փորձաքննության պարտադիր բաժինները, որոնք, սակայն, ներկայացված են ատենախոսության սեղմագրում:

3. Աշխատանքում նկատվում են փաստական որոշ սխալներ: Այսպես, 1878 թ. հունիսի 4-ին Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի և Օսմանյան կայսրության միջև կնքված համաձայնագիրն ատենախոսն անվանում է «Կիպրական կոնվենցիա» (էջ 17), սակայն փաստաթղթի ճշգրիտ անվանումն է «Պաշտպանողական դաշինք Անգլիայի և Թուրքիայի միջև», որի 1-ին հոդվածով սուլթանը համաձայնվում էր, որ Կիպրոս կղզին գրավվի և կառավարվի Անգլիայի կողմից: Ատենախոսը նշում է, որ դրա դիմաց Անգլիան խոստանում էր զենքի ուժով ստիպել Ռուսաստանին թուրքերին վերադարձնել Սան Ստեֆանոյի պայմանագրով իրեն անցած Բայազետ քաղաքն ու Ալաշկերտի հովիտը: Այս առումով միանգամայն տեղին կլիներ, եթե ատենախոսը հիշատակեր բրիտանական գաղտնի դիվանագիտության արդյունքում անգլո-թուրքական համաձայանգրի ստորագրումից օրեր առաջ՝ մայիսի 18/30-ին Լոնդոնում Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև կնքված պայմանագիրը «Սան Ստեֆանոյի պայմանագիրը փոփոխելու մասին», որի 10-րդ հոդվածով Անգլիան Ռուսաստանից արդեն իսկ կորզել էր իր կողմից գրավված Բայազետն ու Ալաշկերտը թուրքերին վերադարձնելու համաձայնությունը: Այնպես որ, Մեծ Բրիտանիան Ռուսաստանին զենքով պարտադրելու կարիք այլևս չուներ և արդեն իսկ ձեռք բերված պայմանավորվածության դիմաց, թուրքերի անտեղյակությունից օգտվելով, Օսմանյան կայսրությունից ստացավ Կիպրոսը:

4. Աշխատանքը միանշանակ կշահեր, եթե ատենախոսը ոչ թե հպանցիկ ձևով ներկայացներ միայն 1964 թ. հունական և թուրքական համայնքների բախումների անդրադարձը Կիպրոսի հայկական համայնքի վրա (էջ 51), այլ ավելի հանգամանորեն

անդրադառնար հայկական համայնքի վրա 1974 թ. թուրքական ռազմական ներխուժման հետևանքներին:

5. Աշխատանքի 2.1., 3.2. և 4.1. ենթագլուխներում նկատվում են փաստերի և մտքերի անհարկի կրկնություններ: Այսպես՝ ատենախոսության 53 և 152 էջերում գրեթե նույնությամբ կրկնվում են ՆԱՏՕ-ի երկրներին ուղղված Խրուշչովի նամակի բովանդակությունը, 56 և 153 էջերում՝ Թուրքիայի վարչապետին ուղղված ԱՄՆ-ի նախագահ Լ. Ջոնսոնի նամակի դրույթները, էջ 57- 58 և 155-156 էջերում՝ Աչեսոնի, իսկ 120 և 164 էջերում՝ Ռոջերսի ծրագրերի կետերը:

6. Վիճելի է որևէ փաստարկով չհիմնավորված ատենախոսի այն պնդումը, թե «1990-ական թթ. Թուրքիան ոչ միայն չկորցրեց իր կարևորությունը ԱՄՆ-ի համար, այլ ընդհակառակը, սկսեց ԱՄՆ-ի կողմից ընկալվել որպես կարևոր հենարան՝ արևմտյան ազդեցությունն Անդրկովկաս և Միջին Ասիա տարածելու ուղղությամբ (էջ 134): Իրականում, սակայն, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Թուրքիայի դերն ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության մեջ զգալիորեն նվազեց, և Վաշինգտոնը հաճախ սկսեց հաշվի չնստել Անկարայի շահերի հետ: Վաշինգտոնի համար Թուրքիայի դերի նվազման վկայություն կարելի է համարել նաև այն փաստը, որ արդեն 1994 թ. կեսերին Թուրքիայում գտնվող 12 ամերիկյան ռազմակայաններից 8-ը կա՛մ փակվել, կա՛մ հանձնվել էին թուրքական զինված ուժերին: ԱՄՆ-ի համար իր նշանակությունը շարունակում է պահպանել միայն Թուրքիայի տարածքում տեղակայված ամերիկյան Ինջիրլիկ ռազմակայանը: ԽՍՀՄ փլուզումից և խորհրդային սպառնալիքի վերացումից հետո Անկարան նույնպես դադարեց Վաշինգտոնի պաշտպանության կարիքը զգալ: Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում 1990-ական թթ. Թուրքիայի ակտիվացումը պայմանավորված էր ոչ այնքան Վաշինգտոնի ուղղորդմամբ, որքան Ռուսաստանի թուլացման պայմաններում հետխորհրդային թյուրքախոս հանրապետություններում իր ազդեցությունը տարածելու Անկարայի անթաքույց մղումներով: Անշուշտ, Թուրքիայի այդ հավակնոտ ծրագրերի իրագործման դեպքում դա կհանգեցներ հիշյալ տարածաշրջաններում նաև արևմտյան և մասնավորապես ԱՄՆ-ի ազդեցության մեծացմանը: Անբավարար ռեսուրսների ու ԱՄՆ-ից համապատասխան աջակցություն

չստանալու պայմաններում Թուրքիան ստիպված եղավ համակերպվել այն իրողության հետ, որ Ռուսաստանը շուտով սկսեց վերականգնել իր ազդեցությունն այդ տարածաշրջաններում:

Արված դիտողությունները բնավ չեն նսեմացնում ատենախոսի կատարած աշխատանքը: Ռաֆիկ Խաչատրյանի «Թուրք-հունական հարաբերությունները «դաշնակցային կոնֆլիկտների» համապատկերում (1950-1990-ական թթ.)» Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է թվանիշին ու մասնագիտությանը, հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Աշխատանքը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարուքյան

01. հոկտեմբեր. 2022թ.

Պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ց. Մարուքյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան